



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 112-Ա

ԱԼԻՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ <<ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>
ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
12-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <<Պառավաքարի գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 13-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը, եզրակացությունը և Ալինա Առաքելյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1.Ալինա Համլետի Առաքելյանին 2019 թվականի օգոստոսի 14-ից նշանակել <<Պառավաքարի գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր երեք տարի ժամկետով և լուծել 2019 թվականի մարտի 12-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

ՄԱՐԶՊԵՏ՝
14.08.2019

Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

X